«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	**Գործի անմահության գաղափարը Հ. Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> պոեմում**
ԱՌԱՐԿԱ	**գրականություն**
ՀԵՂԻՆԱԿ	**Գյուլնազարյան Նառա**
ՄԱՐԶ	**քաղաք Երևան**
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	**<<Գիտակ>> ստեղծագործական կենտրոն**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԴԱՍԻ ՊԼԱՆ 7

ԳԼՈՒԽ 1: Թաթուլ իշխանի և Նադիր շահի համեմատական բնութագիրը..... 8

ԳԼՈՒԽ 2: Գեղեցկությունը և փառասիրության որոգայթը.....10

ԳԼՈՒԽ 3: Խորհրդավոր երազ.....14

ԳԼՈՒԽ 4: Չար գործի հետևանքները 16

ԳԼՈՒԽ 5: Արյունոտ արշալույս 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հազար ութ հայուր վաթսունինն թվին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին,
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,-
Դժվար է ասել:
Սակայն այդ թվին Մայր Հայաստանի
Արգանդը եղավ սրբորեն բեղուն:
Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում…[1]

Տաղանդաշատ բանաստեղծ Պարույր Սևակն այս սքանչելի տողերով ավետում է մեծանուն գրող Հովհաննես Թումանյանի ծնունդը:Գրող, որը դարձավ իր ժամանակի կյանքի և ոգու արտացոլման պարզ ու անխարդախ հայելին:

[1] Պ. Սևակ: Երկերի ժողովածու: 3 հատորով: Երևան: Սովետ. գրող, հ.2: Պոեմներ, 1983թ.: էջ 6:

Գրականագետ Հրանտ Թամրազյանը գրել է.<<Թումանյանը եկել է ժողովրդական տարերքից. նա չի մեծացել ապարանքներում, դայակների գրկի մեջ, բայց չի ունեցել նաև ճորտական ծագում: Դարասկզբին նա էլ Պերճ Պռոշյանի պես որոնում էր հեռավոր ազնվական նախնիներին և հաստատ գտնում էր, որ իր տոհմը Մամիկոնյանների շառավիղներից մեկն է>>:[2]

Թումանյանը նախորդներից ու ժամանակակիցներից ավելի խոր ընկալեց իր ժողովրդի հոգեկան գանձերը և մեծ ուժով արտացոլեց կյանքը՝ հայ գեղջուկի առօրյա հոգսերից մինչև տիեզերքի անհուն խորհուրդները:

Նա կերտել է լիարյուն կերպարներ: Փիլիսոփայական մեկ-երկու վրձնահարված, մի քանի բնութագրական, պատկերավոր և ուժեղ տողեր, և Թումանյանը դառնում է վիրտուոզ կատարող:

Նա բազմաժանր հեղինակ է, բայց ստեղծագործություններում ուրույն տեղ են գրավում պոեմները:

<<Պոեմը չափածո մեծածավալ ստեղծագործություն է, որի տարբեր մասերը միավորվում են սյուժեի կամ կերպարի ընդհանրացմամբ>>:[3]

Ուշագրավ է բարու և չարի փիլիսոփայական խորհուրդը՝ <<Թմկաբերդի առումը>> պոեմը:

Այս ստեղծագործության հիմնական աղբյուրը Երվանդ Լալայանի <<Ջավախքի բուրմունք>> ժողովածուի մեջ տրված այս ավանդությունն է: Այն մի փոքր պատմություն է, որը գրի է առել Երվանդ Լալայանը.<<Թմկաբերդի քրդերը պատմեցին ինձ, թե մի ժամանակ Թմկաբերդում իշխում էր մի հայ իշխան: Պարսից թագավորը եկել, երկար պաշարել է այս բերդը, սակայն չի կարողացել առնել: Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահի վրա և ծածուկ առել է նորա հաճությունը յուր հետ ամուսնանալու, եթե կինը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին: Եվ իբր թե սպանել է ամուսնուն,

[2] Հ. Թամրազյան, <<Բանաստեղծը և մտածողը>>, Երևան, <<Նաիրի>> հրատ., 1995 թ., էջ 50

[3] Է. Ջրբաշյան, Հ. Մախչանյան: Գրականագիտական բառարան, Երևան, <<Լույս>> հրատ., 1980 թ., էջ 253

հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին: Շահն այսպիսով տիրել է բերդին և հարցրել մատնիչ իշխանուհուն.<<Ե՞ս եմ գեղեցիկ, թե՞ ամուսինդ>>: Եվ երբ սա պատասխանել է, թե <<Ամուսինս գեղեցիկ էր>>, շահը հրամայել է կապել սորան ձիու ագիից և քաշ տալ մինչև մեռնելը, ասելով.<<Եթե ամուսինդ շահից գեղեցիկ էր՝ ինչո՞ւ սպանեցիր>>:[4]

<<Թմկաբերդի առումը>> էպիկական պոեմ է, որովհետև հեղինակային միջամտությունը խստորեն նվազում է և նկատելի է հերոսների ցայտուն մասնակցությունը: Հեղինակն այստեղ դառնում է գործողության և կոնֆլիկտի ուղեկից:

Պոեմը բաղկացած է նախերգանքից և տասներկու գլուխներից:

Գրականագետ Էդվարդ Ջրբաշյանը գրել է. <<Թումանյանն աշխատել է պոեմը կապել որոշ պատմական դարաշրջանի հետ: Ժողովրդական ավանդության անորոշ <<պարսից շահը>> պոեմում դարձել է Նադիր շահ, որը թագավորել է XVIII դարի 30-40-ական թվականներին (1736-1747): Այդ կոնկրետացումը պատահական չէր. պատմությունից հայտնի է, է, որ Նադիր շահը բազմաթիվ արշավանքներ է կատարել դեպի Իրանի բոլոր հարևան երկրները, այդ թվում դեպի Անդրկովկաս, աչքի է ընկել իր դաժանությամբ և նենգությամբ>>:[5]

Պոեմում առկա է հայրենասիրական հզոր պայքարի թեման: Բայց այն ստեղծագործության հիմնական գաղափարը չէ:

Պոեմի գաղափարական իմաստը բացահայտվում է նախերգանքում:

Այստեղ Թումանյանն արծարծում է իրեն մտատանջող ու հուզող խոհերը մարդու էության մասին և բանաստեղծի նվիրական երազանքը <<անարատ մարդու>> վերաբերյալ:

Մարդը հավերժ ապրում է իր գործով, այն բարի անունով, որ նրանից մնում է մարդկանց հիշողության մեջ: Գործի միջոցով ամբողջանում է պատկերը՝ թեթև ուրվագծված աշուղական խաղերի ընդմիջումներով.

---

[4] Ե. Լալայան: Երկեր, հ. 1, Երևան, 1983թ., էջ 403

[5] Է. Ջրբաշյան: Թումանյանի պոեմները: ԵՊՀ հրատարակչություն: Երևան: 1964թ., էջ 360

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,

Որ խոսվում է դարեդար,

Երնե՜կ նրան, որ իր գործով

Կապրի անվերջ, անդադար:[6]

Աշուղի կերպարի միջոցով ընթերցողներին հոգեկան անսպառ հարստություն պարգևող բանաստեղծը <<լավության >> կոչ է անում և անմահություն համարում միայն լավ ու բարի արարքը, անեծքով մերժում է չարը, թեև սա էլ կարող է <<անմահանալ>>:

Թափառական աշուղի ասքը բարու, չարի և մարդու էության մասին զուտ բարոյախոսություն չէ, քանի որ հարստանում է հրաբխային կրքերով, խոհական անակնկալ ապրումներով և զգացմունքների ստորջրյա ալեբախումներով:

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է փոխանցել աշակերտներին մարդու իրական անմահության՝ նրա գործի առեղծվածային գաղափարի բացահայտումը, իսկ խնդիրն է պոեմի կերպարների միջոցով ներկայացնել մարդկանց բնավորության դրական ու արատավոր գծերը և սովորողներին ուղղորդել դեպի լավ նպատակներն ու գործերը:

[6] Հ. Թումանյան: Ընտիր երկեր: 2 հատորով: Երևան: Սովետական գրող, հ. 1, 1985 թ., էջ 288

Դասի պլան

<u>Դասի թեման</u>- Գործի անմահության գաղափարը Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> պոեմում

<u>Հիմնական հասկացություն</u>- Վերլուծություն

<u>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</u>- Ժամանակ և տարածություն

<u>Միջառարկայական կապեր</u>- Պատմություն

<u>Դասի նպատակը</u>- Աշակերտներին փոխանցել մարդու իրական անմահության՝ նրա գործի առեղծվածային գաղափարի բացահայտումը

<u>Վերջնարդյունք</u>- Աշակերտներն ըմբռնեն գործի անմահության գաղափարը

<u>Կապն արդիականության հետ</u>- Բարու և չարի հավերժական պայքարը

<u>Կերպարները</u>- Բնութագրում

<u>Մեթոդներ</u>- <<Խիկ>> մեթոդ [7]

[7] Գ. Կիրակոսյան: Հայ գրականության դասավանդման մեթոդիկա: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: ՀԱԱՀ: 2015 թ., էջ 42-48

Գլուխ 1

Թաթուլ իշխանի և Նադիր շահի համեմատական բնութագիրը

Պոեմում Թումանյանը գովերգել է Թաթուլ իշխանի գլխավորած հայրենասիրական, ազատագրական կռիվները, դատապարտել Նադիր շահի զավթողական արյունալի կռիվները:

Թմկա տիրոջ և իր քաջերի անպարտելիության գաղտնիքն անսահման հայրենասիրությունն է: Թաթուլ իշխանի շեշտակի, սրընթաց արծվային հարձակումը սարսափի է մատնում թշնամուն:

Քաջին հակադրված է Նադիր շահը:

Մեկն ազնիվ է, վեհ, շիտակ, մյուսը՝ նենգ և դավադիր: Մեկը խիզախ է ու քաջ, կռվում է հայրենիքի անկախության, արդար գործի համար, մյուսն ստոր է, խորամանկ և կատաղի զավթիչ, ասպատակող:

Թաթուլն ու Նադիր շահը հակադիր կերպարներ են ոչ միայն իրենց գործով, այլև բնավորությամբ, մարդկային արժանիքներով: Թմկա տիրոջ համար հայրենիքի ազատությունը և կնոջ սերն անբաժան են, միաձուլվում են մարդկային մեկ մեծ ու գեղեցիկ զգացմունքի մեջ:

Թաթուլը քառասուն օր ու գիշեր կռվում է քաջաբար և սարսափի մատնում թշնամու հրոսակներին ու անառիկ պահում բերդը:

Թաթուլի կերպարն օժտված է հիպերբոլիկ գծերով: Նա ամպի նման <<անսասան>> է.

Ասավ, կանչեց իր քաջերին,

Թուրը կապեց հավլունի,

Թռավ, հեծավ նժույգ իր ձին,

Դաշտը իջավ արյունի:[8]

Թաթուլը ժողովրդի սիրելին է: Նա միշտ ուրախ և հաղթանակած է վերադառնում իր ամրոց, որտեղ իրեն սպասում է չքնաղագեղ կինը.

Էն տեսակ կին,

Ես իմ հոգին,

Թե աշուղն էլ ունենար,

Առանց զենքի,

Առանց զորքի

Շահերի դեմ կգնար:[9]

[8] Հ. Թումանյան: Ընտիր երկեր: 2 հատորով: Երևան: Սովետ. գրող, հ. 1, 1985 թ., էջ 289

[9] Նույն տեղում՝ էջ 289

Գլուխ 2

Գեղեցկությունը և փառասիրության որոգայթը

Արևելյան վառվռուն գույներով հագեցած ֆոնի վրա գծագրվում է Թմկա տիրուհու առինքնող գեղեցկությունը: Սևաչյա գեղուհին օժտված է նաև ներշնչանքի հզոր ուժով: Կնոջ սերն է Թաթուլին դարձնում անպարտելի:

Բայց գեղեցկությունը կարող է նաև կործանել հերոսին, երբ սերը փոխարինվում է կեղծիքով, հավատարմությունը՝ դավադրությամբ:

Պոեմում խոսվում է Թմկա գեղեցկուհու սրտին տիրելու՝ իբրև Թաթուլին ընկճելու միակ հնարավոր ելքի մասին:

Եվ բնական ճանապարհով, որպես այդ թեմայի զարգացում, հնչում է քնարական երգը, որն արևելյան բանահյուսության ոգով ու պատկերներով ցույց է տալիս կնոջ այդ կործանիչ ուժը, որն անպարտելի հերոսի միակ խոցելի տեղն է, այսինքն՝ նրա <<աքիլլեսյան գարշապարը>>՝ կինն ու գինին.

Էսպես է ասել հնուց էդ մասին

Ֆարսի բյուլբյուլը, անմահ Ֆիրդուսին.

Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին,

Թե չլինին

Կինն ու գինին:[10]

Պոեմում ստեղծվում է գեղեցկության պատրանքը՝ քաջության և հերոսության անսահման ճանապարհի հավերժ ուղեկիցը:

Մի անգամ՝ կռվի դաշտում, շահին հայտնում են Թմկա չքնաղագեղ տիրուհու գեղեցկության մասին, խոսում <<ծով>> աչքերից, ձյունաճերմակ ճակատից, արբեցնող ժպիտից:

[10] Նույն տեղում՝ էջ 290

Իշխանուհու հայացքը դյութիչ է և խորը, ու մարդ կարծես <<կորչում>> է այդ խորության մեջ: Նադիր շահը զգում է, որ բացահայտում է անհաղթ հերոսի անպարտելիության առեղծվածը, գտնում նրան հաղթելու միակ բանալին:

Նազելի տիկնոջ գեղեցկությունը վերածվում է սարսափելի զենքի, որն ուղղվում է իր իսկ դեմ.

Ու ղրկեց Շահը իր թովիչ երգչին.

Գնա տե՛ս, ասավ, Թմկա տիրուհուն,

Երգի՛ իմ սերը նրա առաջին,

Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն:

Խոստացի՛ նրան իմ ոսկի գահը,

Խոստացի՛ նրան ամե՛ն, ամեն բան,

Ինչ որ կարող է խոստանալ Շահը,

Երկրակալ Շահը իր սիրած կնկան:[11]

Եվ Նադիր շահի <<թովիչ>> երգիչը թափառական ու աղքատ աշուղի կերպարանքով մտնում է Թմկաբերդ: Նա երգում է շահի սերը, գանձերը, անսահման փառքը և Թմկա տիրուհու սրտում աստիճանաբար ցանում փառասիրության սերմերը.

Մեզ պես տկար մարդ է նա էլ՝

Սիրուններին միշտ գերի.

Քու ճակատին թագ է վայել,

Լինիս շքե՛ղ թագուհի…[12]

[11] Նույն տեղում՝ էջ 291

[12] Նույն տեղում՝ էջ 292

Թումանյանը մանրամասնորեն չի նկարագրում, թե աշուղի գայթակղիչ խոստումները լսելիս ինչ է զգում իշխանուհին: Բայց մի քանի տողերի միջոցով բացահայտվում է հոգեկան ներքին ալեկոծությամբ լեցուն մի ամբողջ աշխարհ՝ սուր դրամատիկ բախումներով հակադիր պայքար:



Հերոսուհին, լսելով աշուղի երգը, ծանր դրամա է ապրում, ալեկոծվում է նրա ներքին աշխարհը:

Փառասիրության ամենօրյա նուրբ կացնահարվածներից իշխանուհին հոգեկան տանջալլուկ ցնցումների է ենթարկվում: Անքուն գիշերները նրան դարձնում են լռակյաց, գունատ, հոգու մեջ կռվում են սերն ու փառքը.

Լսում է մատաղ Թմկա տիրուհին.

Եվ վրդովում են իր միտքը թաքուն

Դավաճան գործի ամոթը խորին

Եվ արքայական փառքն ու մեծություն…[13]

Թե՛ սերը, թե՛ փառասիրությունը չափազանց ուժեղ են, որպեսզի ապրեն մի հոգու մեջ: Աստիճանաբար հզորանում է փառասիրությունը՝ դուրս վանելով սերն ու հավատարմությունը և ծնելով դավադիր զգացում ու կործանարար կիրք:

Թմկա տիրուհին, գտնվելով հակադիր կրքերի լաբիրինթոսում, մոլորվում է՝ կորցնելով իրականության զգացումը:

Արքայական փառքի ու մեծության հեռանկարից շլացած՝ Թաթուլի չքնաղագեղ կինը դառնում է նենգ ու դավաճան: Հերոսուհին հերթական հաղթանակի առթիվ խնջույք է <<սարքում>>, բաժակներ տալիս զինվորներին.

- Հապա լցրե՛ք, իմ քաջ հյուրեր,

Բաժակներդ լիուլի,

Խմենք – աստված կտրուկ անի

Թուրը իմ քաջ Թաթուլի:[14]

Քաջերը դառնում են խարդավանքի զոհ. իշխանուհին, հարբեցնելով հաղթած զորքին, ամուսնուն, դավադրաբար թշնամու առաջ բացում է ամրոցի դարպասները:

[13] Նույն տեղում՝ էջ 292

[14] Նույն տեղում՝ էջ 293

Գլուխ 3

Խորհրդավոր երազ

Թումանյանը մեծ խորհուրդ և իմաստ էր տեսնում տեսիլների մեջ, որոնք իրականությունից կտրված մարդու խորհրդավոր ապրումների ու զգացողությունների շարունակությունն են:

Երազի նկարագրությունը պոեմի ամենաչքնաղ մասերից է:

Դավադիր լռությունն է թևածում ամրոցում: Քնած են ստոր խարդավանքից անտեղյակ անմեղ մարդիկ.

Լուռ ու խավարչտին կամարների տակ,

Հոգնած ու քնած բազմության վրով

Թռչում են, թռչո՛ւմ, սև, չարագուշակ

Երազներն ահեղ, անվերջ խմբերով:[15]

Խորաբնույթ է Թաթուլին այցելած չարագուշակ տեսիլը, որը կարծես խորհրդավոր մտքերի և դաժան ու սարսափելի իրականության արձագանքն է.

Երազ է տեսնում Թաթուլ իշխանը,

Որ վիշապ օձը եկել է ահա,

Եկել փաթաթվել, իր բեդը պատել,

Գլուխը դրել ետ պոչի վրա: [16]

Թումանյանը զարգացնում է երազի թեման և պատկերում ահռելի հրեշի վերելքը դեպի <<բարձունքը բերդի>>: Իսկ Թմկա տերը տանջվում է մղձավանջից, որը դառնում է տագնապալի և դաժան ոճրի պատկերների շարք.

---

[15] Նույն տեղում՝ էջ 294

[16] Նույն տեղում՝ էջ 294

Պառկած է իբրև Թաթուլ իշխանը

Նազելի կնոջ գլուխն իր կրծքին,

Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ,

Թո՛ղ, որ սպանեմ ես էդ հրեշին:[17]

Այս երազը շատ խոր կապ ունի պոեմի գործողության հետ: Տեսիլը դառնում է հերոսի փրկության հույսի թույլ օղակը.

Էսպես է ասում Թաթուլ իշխանը,

Ու զարհուրանքով տեսնում է հանկարծ,

Իրեն սիրելի կնոջ գլխի տեղ

Օձի գլուխն է կրծքին ծանրացած...[18]

Երազը կանխորոշում է քաջարի իշխանի դաժան ճակատագիրը:

[17] Նույն տեղում՝ էջ 295

[18] Նույն տեղում՝ էջ 295

Գլուխ 4

Չար գործի հետևանքները

Չափազանց ուժեղ է բերդի անկման նկարագրությունը: Անկում, որը մարդու չար գործի հետևանքն է:

Բանաստեղծն սկզբում հարցական հնչերանգով ակնարկ է անում դավադրության մասին: Բայց ընթերցողն ընկալում է ողջ իրողությունը: Կարծես տեսանելի են մատնիչի ստոր արարքները, լսելի են գիշերային խավարում հնչող ձայները, դարպասների ճռնչյունը, ուշացած կանչերը՝ ուղղված քնած զինվորներին ու պահապաններին, նրանց անզոր ջանքերը՝ ազատվելու թշնամու ծուղակից:

Այս տեսարանն արտացոլում է ուժի և գեղեցկության անկման ողբերգությունը:

Հզոր թափով փայլատակում է հանճարի ստեղծած պատրանքը.

Դա՛վ…դա՛վ…ելե՛ք…կոչնա՛կ…պահնա՛կ…

Զենք առեք շո՛ւտ… ձի հեծե՛ք, ձի՛…

Ճռնչում են, դղրդում են

Դարպասները երկաթի…[19]

[19] Նույն տեղում՝ էջ 296

Գլուխ 5

Արյունոտ արշալույս

Գիշերային խավարը հետզհետե ցրվում է, և բացվում է արյունոտ արշալույսը.

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ

Աշխարհքի վրա, Ջավախքի վրա,

Ավերակ բերդին, սև ամպի նման,

Ծուխն ու թշնամին չոքել են ահա:[20]

Մտնելով ավերված Թմկաբերդ, դիտելով դատարկված սեղանն ու <<անտեր գահույքը>>՝ շահը խորհում է, թե ինչքան անկայուն և խաբուսիկ է ամեն ինչ.

Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,

Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.

Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,

Ոչ սիրած կնկա տված բաժակին…[21]

Դաժան գահակալը ոչ թե ցնծագին տրամադրության մեջ է, այլ դառնացած է: Գիշերվա ընթացքում բերդի քնած բնակիչների կոտորածը, ամրոցի ավերումը նրա հոգում արթնացնում են մարդկային զգացմունքներ և ստիպում մտածել սիրո, դավաճանության, կնոջ առեղծվածային էության մասին ու զգալ, հասկանալ, որ ոչինչ հարատև չէ: Անցողիկ են փառքը, հաջողությունը, հաղթանակը, խաբուսիկ են նույնիսկ ամենասուրբ ու նվիրական զգացմունքները: Գուցե Թաթուլ իշխանի ամրոցում նույն բախտին էլ ինքն արժանանա: Ահա թե ինչու նա զարմանքով ու <<դառնությամբ լի>> հարց է տալիս <<սևաչյա մատնիչին>>. <<Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն>>:

[20] Նույն տեղում՝ էջ 296

[21] Նույն տեղում՝ էջ 296

Իսկ Թմկա տիրուհուն, որի հոգում, թեև ուշացած, բայց գլուխ է բարձրացրել զղջման տրամադրությունը, սարսափեցնում են իր մատնության սոսկալի հետևանքները, զոհերը, ավերածությունը: Գեղանի տիկինը հասկանում է փառավոր գահի ու մեծության գինը: Այժմ նա ատում է այդ ամենը, ինքն իրեն, շահին, որին այդքան փափագում էր տեսնել:

Հերոսուհու խոհերում բարձրանում է Թաթուլի կերպարը՝ ազնվությամբ, վեհությամբ, գեղեցկությամբ:

Կյանքը կորցնում է իր արժեքը, և Թմկա տիրուհին հանդուգն պատասխան է տալիս շահին, պատասխան, որը ինքնաձաղկման, հոգեկան բարդ ապրումների մի բուռն հորձանք է.

- Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա…[22]

Շահի հոգում կրկին արթնանում է գազանը, ցասումով կանչում է դահճին.

Դահիճն եկավ ոտից գլուխ
Կարմիր հագած ու արյուն,
Ու դուրս տարան իր պալատից
Թմկա չքնաղ տիրուհուն:[23]

Գեղեցիկ իշխանուհուն գլորում են ձորը.

Գել ու աղվես եկան հանդից
Ագահ սիրտը լափեցին,

[22] Նույն տեղում՝ էջ 296

[23] Նույն տեղում՝ էջ 297

Ցին ու ագռավ իջան ամպից,

Սև աչքերը հանեցին:[24]

Նազելի իշխանուհին չկարողացավ ներքուստ էլ գեղեցիկ լինել, պահպանել մարդկային մաքուր էությունը, դարձավ ստոր մատնիչ՝ վաճառելով սերն ու հավատարմությունը:

Հերոսուհու մահապատիժը չարի կործանման արդարացիության և ցավի ու ափսոսանքի տրամադրությունների միաձուլումն է:

<<Թմկաբերդի առումը>> պոեմում չարության այնպիսի մարմնացումներ, ինչպիսիք են շահն ու իշխանուհին, իրենց բացասական օրինակով հակադրվում են բանաստեղծի խոհերին՝ <<անարատ մարդու>>, բարի գործի անմահության գաղափարին:

Այս ստեղծագործությունը երբեք չի կորցնի իր արդիականությունը և ունի դաստիարակչական մեծ դեր ու նշանակություն:

[24] Նույն տեղում՝ էջ 297

Եզրակացություն

- Հաղթանակը հարատև չէ, այդ պատճառով չպետք է կորցնել զգոնությունը:
- Փառասիրությունը չարագործություն է ծնում:
- Երբ կանգ է առնում մարդու կյանքի սլաքը, շարունակում է անխափան աշխատել հիշողության ժամացույցը՝ ազդարարելով մարդու իրական անմահությունը՝ նրա գործը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պ. Սևակ: Երկերի ժողովածու: 3 հատորով: Երևան: Սովետ. գրող, հ. 2: Պոեմներ, 1983 թ., էջ 6 :

2. Հ. Թամրազյան, <<Բանաստեղծը և մտածողը>>, Երևան, <<Նաիրի>> հրատ., 1995 թ., էջ 50 :

3. Է. Ջրբաշյան, Հ. Մախչանյան: Գրականագիտական բառարան, Երևան, <<Լույս>> հրատ., 1980 թ., էջ 253:

4. Ե. Լալայան: Երկեր, հ. 1, Երևան, 1983 թ., էջ 403:

5. Է. Ջրբաշյան: Թումանյանի պոեմները: ԵՊՀ հրատարակչություն: Երևան: 1964 թ., էջ 360:

6. Հ. Թումանյան: Ընտիր երկեր: 2 հատորով: Երևան: Սովետական գրող, հ. 1: 1985 թ., էջ 288-297:

7. Գ. Կիրակոսյան: Հայ գրականության դասավանդման մեթոդիկա: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: ՀԱԱՀ: 2015 թ., էջ 42-43: